ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հաստատված է
Տնտեսագիտության և կառավարման
ինստիտուտի Գիտական խորհրդի
նիստում (արձանագրություն թիվ 3)

«28» մարտի 2014թ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն Է.Օրդյան

«28» մարտի 2014թ.

«ՕՐ-ԴԱՐ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԿԱՐԳ

«Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ» խորագրով ժողովածուն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում (http://www.boh.am/Պարբերականներ):

Ժողովածուում տպագրվելու համար հոդվածները ներկայացնել տվյալ տարվա համար մինչև մարտի 31-ը՝ պահպանելով հետևյալ պահանջները.

1. *Հոդվածները ներկայացնել տպագիր և էլեկտրոնային տարբերակներով (մինչև 15 էջ ծավալով՝ կցելով գիտության դոկտորի կամ թեկնածուի կողմից ստորագրված կարծիք (երաշխավորագիր)):*
2. *Հոդվածները գրախոսվում են խմբագրական խորհրդի անդամների կողմից:*
3. *Հոդվածներն ենթարկվում են հակապլագիատային ստուգման:*
4. *Հոդվածներն ընդունվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն:*
5. *Վերևի աջ անկյունում մեծատառերով գրել հոդվածի հեղինակի անունը, ազգանունը:*
6. *Վերնագիրը գրել հայերեն, ռուսերեն, անգլերեն՝ մեծատառերով (կողմնորոշումը՝ կենտրոն):*
7. *Համակարգչային շարվածքը A5 չափսի:*
8. *Տառատեսակը՝ Sylfaen:*
9. *Տառաչափը՝ 11:*
10. *Տողերի հեռավորությունը՝ 1.15:*
11. *Լուսանցքները*
    - *վերևից՝ 1.5 սմ,*
    - *ներքևից՝ 1.5 սմ,*
    - *ձախ կողմից՝ 1.5 սմ,*
    - *աջ կողմից՝ 1.5 սմ:*

12. *Աղյուսակները, գծապատկերները և սխեմաները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր, միաժամանակ պետք է նշվեն դրանց կազմման համար օգտագործված տվյալների աղբյուրները (կցել գծապատկերների ֆայլերը Excell ձևաչափով):*
13. *Ներկայացնել գիտական աշխատանքի հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում, բանալի բառերը: Ռուսերեն կամ անգլերեն ներկայացվող աշխատանքի հայերեն ամփոփագիրը ներկայացնել 1.5-2 էջի սահմաններում:*
14. *Ամփոփագրերին հաջորդում են տեղեկություններ հեղինակ(ներ)ի մասին.*
    - *անուն, ազգանուն, պաշտոն, կազմակերպության անվանում, գիտական աստիճան և կոչում՝ երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն),*
    - *հեռախոսահամար,*
    - *կազմակերպության հասցե,*
    - *էլեկտրոնային հասցե:*

Տպագրությունը կատարվում է հեղինակների հաշվին (1 էջը A5 ֆորմատի – 2 500 դրամ):